

Կարեն Խաչատրյան, Գագիկ Ժամհարյան

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՕՐՅԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԻԶԲ)

Բանալի բառեր – Խորհրդային Հայաստան, առօրյա, սոցիալ-տնտեսական, քաղաքական իրողություններ, արևմտահայ գաղթականություն, տեղական բնակչություն, փոխհարաբերություններ, վեճեր, բողոքներ:

1920 թ. վերջին Հայաստանի խորհրդայնացումից հետո հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը դեռ երկար ժամանակ շարունակում էր անչափ ծանր մնալ: Նոր իշխանությունների խոստացած առատ օգնությունը ուշանում էր, երկրում համատարած սով էր, համաճարակային տարբեր հիվանդությունների զոհ էին դառնում հազարավոր մարդիկ, կաթվածահար վիճակում էր երկրի տնտեսությունը, արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը:

1920-ական թվականների սկզբին Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական իրողություններում, առօրյա կյանքում ամենացավոտ հարցերից էր ցեղասպանությունից մազապուրծ եղած, անօթևան և ապրուստի որևէ միջոցից զրկված բազմահազար արևմտահայ գաղթականության խնդիրը: Գաղթականների հոծ զանգվածների առկայությունը լրացուցիչ սոցիալական լարվածություն էր առաջացրել երկրում, միօրինակ չէր նրանց նկատմամբ Խորհրդային Հայաստանի տեղաբնիկ բնակչության վերաբերմունքը: Մի կողմից գիտակցումն էր, որ գաղթականները հայրենակիցներ են, տարաբախտ մարդիկ, որոնք փորձում են ապաստան և փրկություն գտնել Խորհրդային Հայաստանում, որը նաև նրանց հայրենիքն է, և ուրեմն նրանց աջակցելը յուրաքանչյուրի համար բարոյական պարտք պետք է լինի, մյուս կողմից՝ 1920-ական թվականների դժվարին սոցիալ-տնտեսական պայմաններն էին, որոնց մեջ ապրում էր ազգաբնակչությունը: Այս պայմանները հաճախ առաջին պլան էին մղում սեփական գոյապահպանման մտայնությունը, որի ազդեցությամբ գաղթականների նկատմամբ կարող էր ձևավորվել հաճախ անթաքույց դժգոհություն: Բանն այն է, որ ինչքան էլ խորհրդային իշխանությունը կազմակերպչական ակտիվ միջոցառումներով փորձում էր լուծել հայ գաղթականների տեղավորման և նրանց սոցիալական կարիքները հոգալու խնդիրը, նյութական բավարար միջոցներ չլինելու պատճառով նրա հետ սոցիալական այս ծանր բեռը ստիպված կհսում էր նաև տեղական բնակչությունը, որն ինքն էլ գտնվում էր կարիքի մեջ:

Արևմտյան Հայաստանից, Մերձավոր ու Միջին Արևելքից գաղթած հայերն, ըստ էության, տեղական բնակչությունից տարբերակված, ուրույն կացությամբ հատկանիշներ ունեցող սոցիալական խումբ էին, որի համար կենսական առաջնային խնդիր էր դարձել տեղական հասարակությանը ներհյուսվելը: Համընդհանուր սոցիալ-տնտեսական ծանր պայմանների համատեքստում սա դժվարին խնդիր էր հայ գաղթականության համար, և այս գործընթացին վերաբերող տարաբնույթ նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեղական բնակչության հետ առօրյա շփումներում հայ գաղթականների նկատմամբ վերաբերմունքը դրսևորվում էր երկու հիմնական կանխակալ մոտեցումներով. ա) նրանք համարվում էին «օտար», «եկվոր», բ) ընկալվում էին լրացուցիչ սոցիալական բեռ տեղական բնակչության ուսերին:

Նշված իրավիճակը լուրջ դժվարություններ էր հարուցում գաղթականների համար առօրյա կյանքում և իրենց սոցիալական վիճակի բարելավման ճանապարհին: Այս ժամանակաշրջանին վերաբերող արխիվային փաստաթղթերում հաճախ ենք հանդիպում գաղթականների բողոքներ իրենց կողմից վերաբնակեցված գյուղերի տեղական բնակչության դեմ: Նմանատիպ բողոքներ հանդիպում ենք, օրինակ, Ալեքսանդրապոլի գավառի գյուղերի մեծ թիվ կազմող արևմտահայ վերաբնակիչներից: Բողոքների մի մասը վերաբերում է տնտեսական հարցերում հակասություններին, մյուս

մասը՝ տեղական բնակչության կողմից իրենց հանդեպ ցուցաբերվող անհարգալից վերաբերմունքին: Այսպես, օրինակ՝ գավառի Օրթաքիլիսա գյուղի արևմտահայերը բողոքում էին, որ տեղացի բնակիչները արգելել են իրենց անասունների համար խոտ քաղել գյուղի արոտավայրերից¹, իսկ Գյոզալդարա գյուղի արևմտահայերը բողոքում էին, որ չբավարարվելով իրենց արոտավայրերով՝ Պարնի գյուղի գյուղացիները անասուններին մտցրել էին նրանց արտերը՝ փչացնելով ցանած սերմերը²: Փոքր Պարնի գյուղի արևմտահայ գաղթականները դժգոհում էին տեղական բնակչությունից, որոնք հացահատիկը և կավածատերերից ստացած այլուրը բաժանում են իրար մեջ, իսկ գաղթականներին անտեսում են՝ թողնելով նրանց սովի ճիրաններում, և վերջիններս իրենց օրերը «բանջար ուտելով» են անցկացնում³:

Այսօրինակ վեճեր արձանագրվել են նաև Էջմիածնի գավառում: Այսպես՝ դեռևս 1923 թ. մարտ-ապրիլ ամիսներին գավառի Փոքր Շահրիար գյուղից այնտեղ ժամանակավորապես տեղավորված, բայց հարթավայրի կլիմային չհարմարված մոտ 300 սասունցիներ տեղափոխվել էին գավառի լեռնային գյուղեր⁴: Նույն թվականի դեկտեմբեր ամսին այստեղ հողային վեճեր են արձանագրվում տեղաբնիկների և գաղթականների միջև: Օրինակ՝ գավառի Դողք (Դոխս) գյուղի բնակիչները բողոքում էին, որ գյուղացիները արգելում են իրենց զբաղեցնել թուրքերի լքյալ այգիները⁵:

Տեղացիների և գաղթականների միջև լարված փոխհարաբերությունները չէին սահմանափակվում միայն հողային վեճերով: Սրանք ավելի բազմազան դրսևորումներ ունեին և, դատելով գաղթականների բողոքներից, հիմնականում պայմանավորված էին նրանց նկատմամբ խտրական վերաբերմունքով: Գաղթականները բողոքում էին նրանից, որ տեղական բնակչության մեջ ոչ միայն չեն տեսնում իրենց ծանր, անհուսալի դրությանը հաղորդակից լինելու ձգտում, այլ, ընդհակառակը, հաճախ իրենք էլ առօրյա կյանքում նոր գրկանքներ են պատճառում նրանց: Ալեքսանդրապոլի գավառի 3-րդ գավառամասի գյուղերի ներկայացուցիչները գավառի ընդհանուր ժողովին ուղարկած իրենց դիմումի մեջ բավականին մռայլ գույներով էին ներկայացնում այդ գյուղերի տեղական բնակչության վերաբերմունքը իրենց հանդեպ: Ի թիվս իրենց անտեսելու, օթևան չտալու մանրամասների, նրանք ներկայացնում են մի փաստ, որը հատկապես բնութագրական ենք համարում նշված փոխհարաբերությունների համար: Գաղթականները գրում են, որ թուրքական հարձակումներից խուսափելու նպատակով իրենք ժամանակավորապես լքել էին իրենց բնակավայրերը՝ տեղացիներին ի պահպանություն հանձնելով որոշակի քանակությամբ հացահատիկ և տարբեր իրեղեն: Թուրքերի հեռանալուց հետո գաղթականները վերադարձել էին և տեղացիներից պահանջել իրենց ունեցվածքը, սակայն վերջիններս հրաժարվել էին վերադարձնել⁶:

Որոշ բնակավայրերում գաղթականները ենթարկվել էին նաև անօրինական խուզարկությունների, նրանց պատկանող գույքը բռնագրավվել էր, նրանց նկատմամբ կիրառվել էր նաև ֆիզիկական բռնություն: Գաղթականության վիճակն այսպես էին բնութագրել Ալեքսանդրապոլի գավառի Մուսղուղլու գյուղի արևմտահայ վերաբնակիչները. «...Հետևաբար՝ ներկայիս չեն թողնի, որ մենք խոտ քաղենք, ոչ էլ կթողնեն հերկ անենք, առավոտ կելնին մեզ կհայիոյեն, կանպատվեն, կծեծեն, թե մեր գյուղից հեռացեք, եթե ոչ, ձեզ շան օրի կհասցնենք»⁷:

Գաղթականների շուրջ տարաբնույթ ասեկոսների, բացասական պատկերացումների տարածումը նույնպես ուսումնասիրվող ժամանակաշրջանի առօրյա կյանքում ընդունված մոտեցում է եղել: Որոշ նյութերում կարող ենք տեսնել այս երևույթի արձագանքները, որը նույնպես նպաստում էր տեղական բնակչության կողմից գաղթականների հանդեպ որոշակի սառնությանը, անվստահությանը: Օրինակ, երբ

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 84, թ. 4:

² Տե՛ս նույն տեղում, թ. 93:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 89:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 134, ց. 1, գ. 24, թ. 36:

⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 30, թ. 242:

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 84, թ. 13:

⁷ Նույն տեղում, թ. 55:

1921 թ. ավեքսանդրապոլցի գաղթական Հարություն Բարիկյանից գողացել էին նրա ոչ-խարը, և Բարիկյանն այս մասին հայտնել էր կոմիսարին, վերջինս ոչ միայն հրաժարվել էր քննություն կատարել, այլ անպատվել էր նրան և ասել, որ գաղթականները գող ու թալանչի մարդիկ են ու եթե նրանցից գողանում են, լավ են անում¹: Ակնհայտ է, որ կոմիսարն իր այս արտահայտությամբ հանդես է գալիս ոչ թե որպես պետական իրավասու պաշտոնյա, այլ գաղթականության հանդեպ հասարակության մեջ տարածված որոշակի տրամադրությունների կրող, դրանք կիսող:

Գաղթականի կերպարի հասարակական նմանատիպ ընկալումները արտացոլված են նաև ժամանակի հայ գրողների ստեղծագործություններում: Հայ մեծանուն գրող Ստեփան Ջորյանի «Խնձորի այգին» հայտնի վիպակում, կարծում ենք, հեղինակին հաջողվել է վիպակի հերոսների անձնական փոխհարաբերությունների համատեքստում բավականին պատկերավոր ներկայացնել նաև ժողովրդական տրամադրությունները գաղթականների հանդեպ: Վիպակի որոշ դրվագներում հեղինակը ներկայացնում է բացասական այն լիցքերը, որոնք առկա են տեղական բնակչության մեջ, երբ խոսքը վերաբերում է գաղթականներին: Երբ, օրինակ, վիպակի գլխավոր հերոսի՝ Մարտին ապոր ավագ դուստրը՝ Նոյեմը, հորից բացատրություն է պահանջում, թե ինչպե՞ս է իր հանգուցյալ մորը պատկանող շալը հայտնվել Մարտին ապոր այգում աշխատող գաղթական Նունուֆարի գլխին, հոր և դստեր միջև տիպիկ խոսակցություն է սկսվում.

«Մայրիկի շալովնին որտեղի՞ց է վերցրել է՞ն գաղթականը...

- Ես եմ տվել...

- Իսկ ես կարծեցի գողացել է...

- Ինչու՞ պիտի գողանա...

- *Ինչու՞ չէ. անտեր, գաղթական կնիկ է:*

- Նա մաքուր կնիկ է երևում:

- *Մաքուր: ...Որտեղից գիտես մաքուր է. հրե՞րներենց տան ծառայողը պանիր է գողացել, դուրս են արել:*

- *Ամենքը մեկ չեն...*²:

Իսկ մեկ այլ դրվագում Նոյեմը «բայց պսակվե՞լ գաղթականի հետ...» արտահայտությամբ իր զայրույթն ու տարակուսանքն է հայտնում հոր՝ գաղթական կնոջ հետ ամուսնանալու մտադրության նկատմամբ³:

Գաղթականների և տեղական բնակչության փոխհարաբերություններում իր կնիքն էր թողել նաև խորհրդային իշխանությունների կողմից երկրում իրականացվող բոլշևիկյան-կուսակցական գաղափարախոսության տարածումը: Հայտնի է, որ իշխանությունների մոտ առկա էր որոշակի անհագստություն՝ կապված հայ գաղթականների և հակահեղափոխական տարբեր ուժերի համագործակցության հանդեպ: Նրանք չէին բացառում այդ ուժերի կողմից գաղթականներին հակահեղափոխական քարոզչության մեջ ներգրավելու, նրանց օգտագործելու հնարավորությունը, մանավանդ, որ 1920-ական թվականների սկզբին Հայաստանում նրանք դեռ ստիպված էին հանդուրժել հայ գաղթականների և որբերի խնամքով զբաղվող բարեգործական տարբեր կազմակերպությունների (ՀՕԿ, ՀԲԸՄ, Ամերկոմ, Անգլկոմ և այլն) գործունեությունը: Իշխանության համար լուրջ մտահոգության առարկա էր հատկապես գաղթականների և հայ ազգային քաղաքական կազմակերպությունների համագործակցության հնարավորությունը: Օրինակ՝ երկրում լայնորեն իրականացվող հակադաշնակցական քարոզչության մեջ հաճախ էր ուղղակիորեն կամ անուղղակի շահարկվում գաղթականությունը, հաճախ էր վերջինիս անունը կապվում հայ ազգային կուսակցությունների, հայդուկային շարժումների և խորհրդային իշխանությունների անցանկալի այլ երևույթների հետ: Իսկ թե ինչպես էր այս իրողությունը արտահայտվում գաղթականների և տեղացիների շփումներում, փորձենք պարզաբանել օրինակներով:

¹ Տե՛ս նույն տեղում, թ. 38:

² Ջորյան Ս., Երկերի ժողովածու, հատոր 1, Ե., 1960, էջ 443:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 461:

Նշված իրավիճակի դիպուկ բնորոշումը կարող ենք տեսնել, օրինակ, Ալեքսանդրապոլի գավառի Եգանլար գյուղի բնակիչներից մեկի՝ գավառի հեղկոմի նախագահին 1921 թ. ուղղված դիմումի մեջ, որտեղ նա նախագահին խնդրում էր միջնորդել, որ նույն գյուղի տեղաբնիկներից մեկը իրեն վերադարձնի իրենից խլված ցորենն ու գարին: Թե ինչու ինքը չէր կարողանում հետ ստանալ իր մթերքը, գյուղացին բացատրում էր նրանով, որ վախենում է գրպարտանքի զոհ դառնալուց: «...Մինչև հիմա ռուսահայի և տաճկահայի միջև զանազան հարց կար, երկյուղ էինք կրում, իսկ հիմա, տեսնելով մարդկային ազատ օրը (իմա՝ խորհրդային իշխանության հաստատումը - հեղ.), դիմեցինք ձեզ, հույսով ենք, որ չեք մերժի մեր խնդիրը...», այսպիսի տողեր ենք կարդում նրա դիմումի մեջ¹: Գյուղացու նշած երկյուղը պետք է հիմնավորված համարել, որովհետև նման հիշատակությունները շատ են: Օրինակ՝ հաջորդիվ ներկայացվող արխիվային վավերագրի մեջ տեսնում ենք նույնանման միջադեպ, որը տեղի է ունեցել Եգանլար գյուղի վերաբնակիչ Մխիթար Ալեքսանյանի և Քյուլլիջա գյուղի բնակիչ Հարություն Ավագյանի միջև: Վերջինս դեռևս 1920 թ. Ալեքսանյանից պարտքով գարի է վերցնում ու երբ Ալեքսանյանը մեկ տարի անց պահանջում է իր պարտքը, Ավագյանը հրաժարվում է այն վերադարձնել: «...Դիմեցի Քյուլլիջայի գյուղկոմին, նրանք կանչին քննության, պարտատերը գրպարտեց ինձ վրա՝ *ցույց տալով ինձ որպես դաշնակցական* (ընդգծումը մերն է) ես էլ երկյուղից, ...տեսա, որ ինձ սպանել պիտի տա, կորցնել պիտի տա, հեղկոմի ներկայությամբ ստորագրություն տվի, թե ստացել եմ», - գրում է Ալեքսանյանը²:

Ներկայացված միջադեպերը որոշակի բնութագրում են գաղթականներ-տեղական բնակչություն-իշխանություն հարաբերություններում առկա առանձնահատկությունները: Հայտնի է, որ թեպետ խորհրդային իշխանությունը խրախուսում էր ներգաղթը, լրջորեն զբաղվում էր գաղթականության պարենավորման և տեղավորման հարցերով, բայց նրանց նկատմամբ վարվող քաղաքականության մեջ ցուցաբերում էր զգուշավորություն՝ հակահեղափոխության վտանգ տեսնելով գաղթականների, ինչպես նաև նրանց հովանավորող կառույցների մեջ: Այդ իսկ պատճառով խորհրդային իշխանությունը ակտիվ գաղափարական աշխատանք էր տանում նրանց հետ՝ կոմունիստական գաղափարախոսությունը նրանց շրջանում տարածելու և իշխանության նկատմամբ վստահությունն ամրապնդելու նպատակով: Իսկ տեղական բնակչության վերաբերմունքի մեջ տեսնում ենք գաղթականության՝ խորհրդային Հայաստանում հիմնավորվելու ցանկության հանդեպ արտահայտված դիմադրություն: Պետք է ենթադրել, որ այս դիմադրության հետևանքն էր խորհրդային իշխանության մոտ գաղթականներին անբարենպաստ լույսի ներքո ներկայացնելու (դաշնակցական, հակահեղափոխական և այլն) նրանց ձգտումը:

Տեղական բնակիչների՝ գաղթականների նկատմամբ հավաքական տրամադրությունների խոսուն օրինակ է նաև ստորև ներկայացվող փաստաթուղթը: Այն ՀՍԽՀ ներքին գործերի և հողժողովմատների՝ գաղթականության տեղավորման հարցերով զբաղվող պաշտոնյայի ծավալուն զեկուցագիր է, որը հանրապետության ժողովմախորհին է ուղարկվել 1925 թ.: Փաստաթղթից ներկայացվող հատվածը, կարծում ենք, չունի մեկնաբանությունների կարիք: Այն պարզապես հաստատում է վերը նշած դիտարկումները: «1921 թվից հիշյալ գավառների (խոսքը գնում է Դիլիջանի և Լոռի-Փամբակի գավառների մասին - հեղ.) պետական բոլոր օրգանները պահանջում են տեղափոխել այդ գաղթականներին, որոնք... ծանր բեռ են հանդիսանում այդ գավառների բնիկ սակավահող ու աղքատ ժողովրդի համար, որն ահա 6-7 տարի է պատսպարում և որոշ չափով կերակրում է գաղթականությանը: Գաղթականության այս մասը տեղավորված է կիսավեր շենքերում կամ իր նման աղքատ ու չունևոր բնիկի հետ մի սենյակում: Նման պայմաններում զարգանում և տարածվում են տարբեր հիվանդություններ: Վերջերս սկսել են ներքգործողվածատ գալ այդ գավառների գյուղերի

¹ ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 84, թ. 88:

² Նույն տեղում, թ. 24:

ներկայացուցիչները՝ հատկապես գաղթականությանը հեռացնելու պահանջով, որին այլևս չընդառաջել հնարավոր չէ»¹:

Գաղթականության վերաբերյալ նմանատիպ տրամադրությունների տարածումը տեղական բնակչության կողմից նպատակ ուներ իշխանությունների համակրանքի, վստահության, հետևաբար նաև տնտեսական ու սոցիալական օգնության նժարը թեթել դեպի իր կողմը: Սա գիտակցելով՝ գաղթականներն իրենց հերթին փորձում էին հաղթահարել խորհրդային իշխանության անվստահությունն իրենց հանդեպ և տեղական բնակչության հետ բարդ փոխհարաբերություններում ապավինում էին հիմնականում նրա օգնությանը: «...Գաղթականության և տեղացիների փոխհարաբերությունները շատ լավ կլինեն, երբ խորհրդային կառավարությունը բարի լինի և ազդարարի, որ մենք խորթ չենք, անհարազատ չենք այս հողի վրա և այս կառավարության մեջ, որը մեր բանվորագյուղացիական իշխանությունն է, ...մենք իրանց հետ հավասար իրավունքներ պիտի ունենանք...», - այսպես էին Ալեքսանդրապոլի՝ արևմտահայերի համագումարին ուղղած իրենց գեկուցման մեջ արտահայտվել գավառի մի խումբ արևմտահայ գյուղացիներ²:

Գաղթականների նկատմամբ պետական հոգատար վերաբերմունքի անհրաժեշտության մասին է նաև ներկայացվող հաջորդ փաստաթուղթը, որտեղ նույնպես գաղթականության վիճակը և դրանով պայմանավորված հասարակական ընդհանուր մթնոլորտը բնութագրող հետաքրքիր ձևակերպումներ ենք հանդիպում: Այսպես՝ 1920 թվականի վերջին Հնչակյան կուսակցության անդամներից մեկը ՀՍԽՀ հեղկոմի նախագահ Ս. Կասյանին գրել է. «Մեր խորհրդային Սոցիալիստական հանրապետության մեջ ապրում են զանազան ազգություններ, ինչպես թուրք, եզդի, հույն, և հայ ժողովուրդն էլ բաժանված է երկու հատվածների, ինչպես նախկին տաճկահայերի և ռուսահայերի: Նախկին տաճկահայերը, որոնք համարվում են ավելի հակահեղափոխականներ, պետք է ասած, որ այս հասկացողությունը չի համապատասխանում իրականությանը, ընդհակառակը՝ տաճկահայերը, զրկված լինելով ամեն բանից և ավելի շատ ճնշված, հարստահարված լինելով օտարազգի և հայազգի տիրապետողների կողմից, մեր Սոցիալիստական խորհրդային հանրապետությունը նրանց համար հանդիսանում է փրկարար միջոց, որը միայն հնարավորություն կտա վերջ գտնելու իրենց տանջանքներին և զրկանքներին: Տաճկահայ մասսայի մեծագույն մասը լավ է ըմբռնում այս կետը և իր անվերապահ համակրությունն անտարակույս Սոցիալիստական խորհրդային Հայաստանի կառավարության կողմն է, ի բացառեալ մի քանի խմբապետներից և նախկին հակահեղափոխական կառավարությանը հյու և հնազանդ ստրուկ գործիք ծառայող մի քանի վարժապետներից»³: Դժվար չէ նկատել, որ այս դիմումի մեջ նույնպես առկա է արևմտահայ գաղթականության նկատմամբ խորհրդային իշխանությունների վստահությունը ամրապնդելու մտայնությունը՝ պայմանավորված այն հաստատ համոզմունքով, որ միայն պետությունն է ի գորու այս մարդկանց փրկել սովից և նրանց համար գոյատևման տանելի պայմաններ ապահովել: Հայ գաղթականները ամեն կերպ ձգտում էին ստանալ խորհրդային իշխանության աջակցությունը, ընդ որում ոչ միայն տնտեսական հարցերում, այլ նաև գաղթականության անվտանգության ապահովման հարցում:

Հայտնի է, Ալեքսանդրապոլի գավառը 1920-1921 թթ. շարունակում էր ենթարկվել քեմալականների ավերածություններին ու թալանին: Նրանց կողմից առանձնակի ատելության և դաժանության էին արժանանում գավառում ապաստանած արևմտահայ գաղթականները, որոնց թուրքերն արհամարհանքով անվանում էին «Մշեցի աղամ (մարդ)»⁴: Այս առթիվ հայտնի է հայ գաղթականության մեծ մտահոգությունը, որն արտահայտված էր խորհրդային ղեկավարներ Վ. Լենինին, Ի. Ստալինին, նաև Լևոն Կարախանին և Սահակ Տեր-Գաբրիելյանին արևմտահայ մի խումբ գաղթականների ուղարկած դիմումների մեջ, որում մասնավորապես ասված է. «Մենք հավատում էինք,

¹ ՀԱԱ, ֆ. 123, ց. 42, գ. 63, թ. 13:

² ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 84, թ. 34:

³ ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 487, թ. 16-17

⁴ Տե՛ս Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թվականներին, Ե., 2007, էջ 131-132:

որ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման փաստն իսկ սթափեցնող ներգործություն կունենար Քեմալի վրա», սակայն նա շարունակում է ավերել նաև Խորհրդային Հայաստանը: Գաղթականները հույս են հայտնում, որ Խորհրդային Ռուսաստանը «վճռական քայլերի կդիմի, խելքի կբերի Քեմալին և կփրկի Խորհրդային Հայաստանը հետագա ավերումից»¹:

Այն, որ արևմտահայ գաղթականության մեծամասնությունը զերծ էր հակա-խորհրդային տրամադրություններից հաստատվում է նաև նրա պատրաստակամությամբ՝ մասնակից լինել խորհրդային իշխանության տարաբնույթ ձեռնարկումներին: Հայտնի է, օրինակ, որ, չնայած գտնվելով տնտեսական և սոցիալական անմխիթար վիճակում, արևմտահայ գաղթականները իրենց նպաստն են ունեցել Խորհրդային Ռուսաստանի Մերձվոլգյան շրջանի սովյալների օգնելու գործին: Այսպես՝ 1922 թ. հունվարի 12-ին Վրաստանում ՀՍԽՀ Արևմտահայ բյուրոյի նախագահը հանրապետության ժողովմխորհի նախագահ Ա. Մյասնիկյանին տեղեկացնում է, որ հունվարի 15-ին կոնսերվատորիայի դահլիճում կազմակերպվելիք բարեգործական համերգից ստացված հասույթի 10%-ը գումարվելու է արևմտահայերի կողմից հանգանակված այլ միջոցներին և փոխանցվելու է Մերձվոլգյայի սովյալներին: Բյուրոյի նախագահը խնդրում է Մյասնիկյանին ներկա գտնվել բարեգործական համերգին²:

Հայ գաղթականների հարաբերությունները լարված էին ոչ միայն տեղացի հայերի, այլ նաև Հայաստանի մահմեդական բնակչության հետ: Ու եթե առաջին դեպքում գաղթականները ձգտում էին հարաբերությունները կարգավորել իշխանությունների միջնորդությամբ և հաշտարարությամբ, ապա երկրորդ դեպքում նրանք ինքնուրույն նախաձեռնություններ էին իրականացնում մեծ մասամբ անօրինական քայլերով: Փաստական որոշ նյութեր ապացուցում են, որ Հայաստանում բնակվող մահմեդական, հատկապես թուրք ազգաբնակչության հանդեպ գաղթականների մեջ գոյություն ուներ անհաշտ, թշնամական վերաբերմունք, որը դրսևորվում էր հաճախ կոնկրետ գործողություններով: Այսպես, օրինակ՝ 1921-1922 թթ. բավականին լարված հարաբերություններ են եղել Էջմիածնի գավառի Էշնակ (Աշնակ) գյուղի սասունցի վերաբնակիչների և մահմեդականների միջև: Վերջիններս սասունցիների կողմից իրենց նկատմամբ կիրառվող բռնությունների մասին ահազանգել էին իշխանություններին³: Իսկ 1923 թ. ապրիլին կրքեր էին բորբոքվել Էջմիածնի գավառի Աղջարխ գյուղում: Պատճառը գյուղում բնակություն հաստատած սուրմալվեցի գաղթականներ Կարապետյան եղբայրների բացահայտ թշնամական վերաբերմունքն է եղել գյուղի թուրք բնակիչների հանդեպ: Վերջիններս ենթարկվել էին բռնությունների, հետապնդվել էին Կարապետյանների կողմից, եղբայրները նույնիսկ սպառնացել էին գյուղից հեռանալու իրենց պահանջը չկատարելու դեպքում նրանց «զանազան վտանգների հասցնել»⁴: Գյուղի թուրքերը նշում էին, որ մինչև եղբայրների գալը տեղացի հայ բնակչության հետ իրենք որևէ խնդիր չեն ունեցել, իսկ Կարապետյան եղբայրները գյուղ են եկել և իրենց հալածում են ինչ-որ դիտավորությամբ, որն իրենց հասկանալի չէ: Նշենք, որ Կարապետյան եղբայրների դիտավորության մասին պատկերացում է տալիս գործով զբաղվող գավառի 3-րդ շրջանի միլիցիայի պետը գավառի գործկոմի նախագահին ուղարկած իր զեկուցագրում: Մեջբերենք որոշ հատվածներ նշված զեկուցագրից: «...Վերոհիշյալ մեղադրյալները (Կարապետյան եղբայրները - հեղ.) անցյալում եղել են միջակ դասակարգի մարդիկ և տրված տեղեկություններով ...դրանք ոչ մի բանում չեն մեղադրվել, բայց հիմա դրանք ճիշտ է, որ թուրքատյաց մարդիկ են և դրա հետ միասին վերոհիշյալները թուրքերի տներում են ապրում՝ տուն չունենալու համար...»⁵: Համարելով Աղջարխի թուրքերի վկայությունները և միլիցիայի պետի զեկուցագիրը՝ կարծում ենք, որ Կարապետյան եղբայրների նման վերաբերմունքի գլխավոր պատճառը հենց

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 119:

² Տե՛ս նույն տեղում, էջ 229:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 543:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 134, ց. 1, գ. 24, թ. 87:

⁵ Նույն տեղում, թ. 89:

գեկուցագրում նշված թուրքատյացությունն է: Այն, բնականաբար, ուներ իր պատճառները, և դրանք տեսանելի են նաև ներկայացված նյութերում: Սուրմալուի գավառից փախած, թուրքերի կողմից հալածված գաղթականները գալիս են հայկական գյուղ և բախվում այն իրականությանը, որ իրենք, անօթևան լինելով, պետք է օթևան խնդրեն թուրքերից, որոնց իրենք ընկալում էին որպես իրենց ողբերգությունների պատճառ: Կարծում ենք, եթե Խորհրդային Հայաստանի տեղաբնիկների համար ինչ-որ տեղ հնարավոր էր թուրքերի հետ խաղաղ գոյակցելը, ապա օրինաչափ է, որ գաղթականությունը այս խնդրին առավել հիվանդագին պետք է մոտենար:

Ամփոփելով նշենք, որ ներկայացված փաստական նյութերի հիման վրա Խորհրդային Հայաստանում ապաստանած արևմտահայ գաղթականների և տեղական բնակիչների միջև առօրյա փոխհարաբերությունները 1920-ական թվականների սկզբին հիմնականում ներկայացվեցին բացասական լույսի ներքո: Կարծում ենք՝ սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի, քաղաքական վայրիվերումների պայմաններում սույն ուսումնասիրության մեջ ներկայացված լարված մթնոլորտը պետք է համարել այս դժվարին ժամանակաշրջանի համար առավել բնութագրական: Մյուս կողմից հարկ է նկատի ունենալ, որ առկա է նաև փաստական նյութ տեղական բնակչության կողմից գաղթականներին օգնելու, նրանց տառապանքները թեթևացնելու, նրանց հետ վերջին կտոր հացը կիսելու դեպքերի մասին: Գրկաբաց ընդունելու դեպքերը, սակայն, պետք է համարել յուրօրինակ ճոխություն, որը Խորհրդային Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը չէր կարող իրեն թույլ տալ: Պատճառները զուտ տնտեսական էին և պետք է դիտարկվեն ոչ թե ազգային մտածողության, ազգային պատկանելության, այլ զուտ կենցաղային մակարդակում, ժամանակի առօրյա կյանքի համատեքստում: Տնտեսական ծանր, հաճախ անելանելի դրության, չքավորության մեջ ապրող գյուղացու համար, բնականաբար, դժվար էր հաշտվել այն փաստի հետ, որ իր հոգսերն ավելանում են չքավոր գաղթականների պատճառով, որոնց հետ նա ստիպված էր կիսել իր կենցաղը: Եվ պետք է արժանին մատուցել Խորհրդային Հայաստանի իշխանություններին, որոնք, անկախ իրենց դասակարգային, կուսակցական և գաղափարական մոտեցումներից, արեցին ամեն հնարավորը հայ գաղթականներին ընդունելու և տեղավորելու, նրանց հոգսերը թեթևացնելու հարցում: Հետագա տարիներին այս քաղաքականությունը շարունակվեց և աստիճանաբար Խորհրդային Հայաստանում հասարակական մտածողության մեջ և առօրյա կյանքում «գաղթական» եզրույթը վերանում էր:

Карен Хачатрян, Гагик Жамгарян, Из истории повседневности западноармянских беженцев в Советской Армении (начало 1920-ых годов) – В статье рассматриваются взаимоотношения местного населения и армянских беженцев в Советской Армении в повседневной жизни на фоне тяжелой социально-экономической ситуации начала 1920-ых годов. С помощью ряда архивных материалов делается попытка выявить особенности этих взаимоотношений, а также социально-психологические причины присутствующего в них напряжения. Освещается также роль советской власти в урегулировании отношений между беженцами и местным населением.

Karen Khachatryan, Gagik Zhamharyan, From the everyday life history of Western Armenian refugees in Soviet Armenia (early 1920s) - The article examines the relationship of the local population and Armenian refugees in everyday life in Soviet Armenia at the general background of the difficult social and economic situation of the early 1920s. With the help of some archival materials an attempt is made to reveal the features of these relationships, as well as the socio-psychological reasons of the tension present in them. The role of the Soviet authorities in settling relations between refugees and the local population is also elucidated.